ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգի միջոցով էլեկտրոնային աճուրդով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 2019 թվականի կարիքների համար լարային հեռահաղորդակցական ցանցով տվյալների փոխանցման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղարի 14.11.2018թ. N 342/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 12.12.2018թ. ժամը 10-00-ին, ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Գ.Ստեփանյանը, Վ.Ալոյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ
Հայտերի գնահատման մասին

-Գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով առաջին տեղը զբաղեցրած «Յուքոմ» ՍՊԸ-ի կողմից գնումների էլեկտրոնային (e-Auction) համակարգով ներկայացված փաստաթղթերը արձանագրեց, որ «Յուքոմ» ՍՊԸ-ն Հավելված-2-ում նշել է, որ կից ներկայացնում է նաև գործակալության պայմանագրի պատճենը և դրա կողմ հանդիսացող անձի տվյալները, համատեղ գործունեության պայմանագրի պատճենը և սույն հրավերով նախատեսված լիցենզիայի (ներդիրի) պատճենը, սակայն այդ փաստաթղթերը բացակայում են, ինչպես նաև չի ներկայացրել <<Մասնագիտական փորձառություն>> որակավորման չափանիշով պահանջվող փաստաթղթերը:
-Համաձայն ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնման ընթացակարգի 7.16 կետի՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև որակավորման չափանիշները հիմնավորող փաստաթղթերի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ծանուցում է առաջին տեղը զբաղեցրած մասնակցին առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:
-ՊԵԿ-ԷԱՃԾՁԲ-19/1 ծածկագրով գնահատող հանձնաժողովը որոշեց նիստը մեկ աշխատանքային օրով կասեցնել և համակարգի միջոցով ծանուցել «Յուքոմ» ՍՊԸ-ին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:
-Հաջորդ նիստը հրավիրել ոչ ուշ, քան վերոհիշյալ փաստաթղթերը հանձնաժողովի անդամներին տրամադրվելուն հաջորդող երրորդ աշխատանքային օրը, ժամը 10-00-ին:

Ընդունվել է որոշում՝ կողմ 3, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Գ.Գալստյան

Անդամներ՝ Գ.Ստեփանյան

Վ.Ալոյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան